ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու

ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ՝ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Գրիգոր Գուրզադյանի ստեղծած գեղագիտական աշխարհի ազգամշակութային նշանակությունն անգնահատելի է: Գրողը պատմական մեծ իրողությունների շարքում նշանակալից դեր է հատկացնում ճարտարապետությանը: Նրա գեղագիտական համակարգում առանձնակի շնորհի է արժանացած հայկական հին ճարտարապետությունը, որը նա համարում է հզոր իրողություն, «եզակի ու խիստ ինքնատիպ մի երևույթ աշխարհի համար»: Գուրզադյանը անսահման հիացմունքով է պատկերում ու գնահատում հայ մարդու մտքի փառավոր թռիչքները ճարտարապետության բնագավառում: Այդ կոթողները, լինեն կանգուն, կիսավեր թե ավեր, հավասարապես մեծարժեք է համարում նախևառաջ իրենց՝ ազգային պատմամշակութային հիշողության պահպանման նշանակությամբ:

Հիմնաբառեր. *պատմամշակութային, ներաշխարհային, աշխարհահռչակ, խորագիտակ, գեղագետ, խոհագրական, ազգամշակութային, ինքնօրինակ, կոթողներ, մեծարժեք*

JEL: Z11

Աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Գրիգոր Գուրզադյանի՝ որպես խոհագրողի աշխարհայացքային կանխադրույթը ձևավորող կենսական կողմնորոշիչներն ու նրա ներաշխարհի նրբերանգների ամբողջությունը իրենց ար-

տահայտումներով և կենսականությամբ հատկապես ընդգծվում են գիտությանը, արվեստի տարբեր ճյուղերին, առանձնապես համաշխարհային և ազգային ճարտարապետության կոթողներին նվիրված ստեղծագործություններում: Այդ գործերի ստվարաթիվ էջերում արտահայտվել են ոչ միայն հեղինակի՝ որպես հզոր ինքնահայեցողությամբ օժտված գեղագետի տաղանդի ինքնահատուկ գծերը, այլև պատմական տարբեր և իր իսկ ապրած ժամանակաշրջանների հասարակական ձգտումներն ու գեղագիտական պատկերացումները:

Գուրզադյանը գերերևույթական մտածողությամբ, ինչպես Հրանտ Մաթևոսյանը կասեր, «մոնումենտալ մարդ» էր, ոչ միայն որպես աշխարհահռչակ գիտնական, այլ նաև որպես արվեստի տարբեր ճյուղերի խորագիտակ, որպես տիեզերախոհ իմաստասեր ու գրող: Ասվածի խոսուն հավաստումներն են արվեստի, ընդհանրապես ազգային և համամարդկային մշակույթի՝ ինչպես մարդու վրա ունեցած ազդեցության, այնպես էլ ազգի, ժողովրդի պատմամշակութային հիշողության պահպանման գործում ունեցած դերի վերաբերյալ մեծատաղանդ գրողի խորունկ մտածավալումներով դիտարկումներն ու ինքնատիպ գնահատումները:

Ամեն արվեստ իր հայրենիքն ու ազգային էությունն ունի: Այն արվեստը, որի հայրենիքը Հայաստանն է, Գրիգոր Գուրզադյանի ստեղծած գեղագիտական աշխարհում ինքնահատուկ տեղ ունի: Տաղանդավոր գրողն այն կարծիքին է, որ *առանց ազգայինի չի կարող ստեղծվել համամարդկային արվեստ ու կապեր նաև համամարդկային:* Հայեցմանը հաջորդում է դիտարկումը. *«Խնդիրն այն է, թե որքանով է հաջողվում գտնել կերպ զուտ ազգայինը համամարդկային դարձնելու»*[1]*:* Գրում է՝ խորապես համոզված լինելով, որ հայոց մեծերը *«իրենց հանճարով կարողացան զուտ ազգայինը դարձնել արժեք համամարդկային»:*

Խորապես ազգային էությամբ ու բնավորությամբ հայտնի, համամարդկային արժեք դարձած մշակութային իրողություններ ներկայացնող, նրանց մասին պատմող խոհագրություններում տեղ գտած գուրզադյանական հայեցումները, գնահատումներն ու մեկնաբանությունները նախևառաջ կարելի է դիտարկել որպես ամենայն ազգայինի մեծարման ու հայրենանվիրության հղագրումներ սերունդներին: Նման առաքելությամբ են կենսավորված **«Կաքավաբերդի առեղծվածը», «Անի... Կուսանաց վանք», «Կարմրավոր... Կատարելություն հարմոնիայի...», «Խծկոնքի հրաշքը», «Պտղնու կամարը... Հմայքն ավերակի...», «Նարեկացու աղերսանքը», «Զարենց», «Սարոյանական տիեզերքը», «Կալենց... Մտորումներ ցուցահանդեսից», «Խրախճա՛նք գույների», «Մինաս»** խոհագրությունները, որոնք գրական հանգանակի դեր կատարող գործեր են:

Նշյալ խոհագրությունները իրենց գեղագիտական նշանակությամբ համարժեք գործեր են: Եթե միայն ցանկանանք առանձնացնել խնդրո առարկա թեմայի շրջանակում դիտարկվող նյութը, ապա ուշադրության ու դիտարկման նշակետում, բնականաբար, կպահենք ճարտարապետական գլուխգործոցային կոթողներ ներկայացնող խոհագրությունները:

Աշխարհահռչակ տիեզերագետը պատմական մեծ իրողությունների շարքում նշանակալից դեր է հատկացնում ճարտարապետությանը, որն ըստ նրա՝ *«հարմոնիա է՝ գծերի ձևերի, ծավալների»: «Ճարտարապետությունն*

[1] **Գր. Գուրզադյան,** Էսսեներ, հարցազրույցներ, էջ 11:

այն է, որին մարդու հայացքը բառիս բուն իմաստով ամեն օր է հառնված: Պետք է պարզապես լսել ճարտարապետական ռիթմը, ճարտարապետության սիմֆոնիան, երաժշտությունը՝ գծերով ու ձևերով ներկայացված»[2]:

Գուրզադյանի խոհագրություններում առանձնակի գնահատման է արժանացել ինքնատիպ մշակութային էությամբ և պատմականությամբ նշանավորվող միջնադարյան հայկական ճարտարապետությունը, որն *«իր կատարելությամբ, տիեզերական ընկալմամբ այնքան է հեռու մեր այսօրվա մտածողությունից, որ հանգիստ կարող է դիտվել որպես արգասիք այլմոլորակային քաղաքակրթության...»*[3]:

Արվեստի նրբագիտակ գրողն իր խոհագրական գործերում շատ բարձր գնահատումով է խոսում մեր հին ճարտարապետության մասին՝ այն համարելով հզոր իրողություն, *«եզակի ու խիստ ինքնատիպ մի երևույթ աշխարհի համար»:* Ահա ինչպիսի գնահատականով է նա արտահայտում իր վերաբերմունքը. *«Հանենք հին հայկական ճարտարապետությունը մեջտեղից, և աշխարհից, այո՛, ինչ-որ բան կպակասի: Այդ ճարտարապետության թողած տրամադրությունը, մարդն ինքն իրենից դուրս գալու, վերանալու, հոգեպես ինչ-որ վիճակի անցնելու զգացողությունը չի կարող փոխարինել ոչնչով. Հին Եգիպտոսն ու Հին Հունաստանը, ողջ դասական ճարտարապետությունը, մեծ չափանիշներ լինելով հանդերձ, այլ բաներ են, այլ զգացմունքներ»*[4]:

Գուրզադյանի գեղագիտության մեջ միջնադարյան ճարտարապետության թեմայի բազմակողմանի արծարծումները մեծապես պայմանավորված են հատկապես ազգային մշակութային արժեքների նկատմամբ ունեցած ակնածալից վերաբերմունքով և դրանց՝ ժողովրդի բարոյահոգեբանական կերպի վրա թողած ազդեցությունների գաղափարական գնահատումներով:

Միջին դարերում, երբ հիմնականում իշխում էր աստվածակենտրոն գեղագիտական աշխարհայացքը, Հայաստանում, ինչպես առհասարակ քրիստոնեական քաղաքակրթությունը ներկայացնող բոլոր երկրներում, շատ կարևոր նշանակություն են ունեցել հոգևոր կենտրոններ հանդիսացող տաճարները: Դրանք ազգային բնավորություն ու բովանդակություն կրող և արտահայտող մշակութային արժեքների շարքում առանձնակի տեղ ու դեր ունեցող կոթողներ են եղել բոլոր ժամանակներում և, որպես ազգային լինելիության, ինքնաճանաչողության ու ինքնաըմբռնման հզոր պատվարներ, ժամանակի հետ միաձույլ, դարձել են ժողովրդի պատմության անբաժանելի մասը: Այդ կոթողների դերը նշանակալից է հատկապես այն ժողովուրդների կյանքում, որոնց գաղափարաբանության ու դավանանքի արժեհամակարգը ձևավորող գործոններից մեկն էլ պատմական հիշողությունն է՝ իր առանձնագծերով:

Ինչպես բոլոր ավանդական հասարակությունների, հայ հասարակության արժեքային կողմնորոշման համակարգում նույնպես հիմնարար են «հիշողությունների վրա հենված նորմատիվ դրսևորումները»[5]: Թերևս հայերին բաժին հասած ճակատագիրն է ստիպել, որ իրենց ազգային ինքնության որոնման ուղիները միտվեն դեպի անցյալ. սա փաստ է, որը նաև կենսաձև է թելադրում ու կողմնորոշիչներ պարտադրում: «Էթնոս-ազգի գոյությունն իրողություն ու

---

[2] **Գր. Գուրզադյան,** Էսսեներ, հարցազրույցներ, «Զանգակ» հրտ., Եր., 2012, էջ 79:
[3] **Գր. Գուրզադյան**, Կաքավաբերդի առեղծվածը, «Ապոլոն» հրտ., Եր., 1998, էջ 42:
[4] **Գր. Գուրզադյան,** Էսսեներ, հարցազրույցներ, էջ 53:
[5] **Բ. Գիշյան,** Մահվան արևելյան և արևմտյան արժեքային կողմնորոշումների շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, 2004, էջ 99-108:

պատմական գործընթացի փաստ է դառնում միայն սեփական պատմությամբ, որի ստեղծման ու իմաստավորման հիմնական միջոցը մշակույթն է: ….Այն ոչ միայն գիտակցված ու ապրումային, ինտուիտիվ ու զգացմունքային անդրադարձ է ողջ էթնիկ անցյալի նկատմամբ, այլ նաև այդ հիմքի վրա ներկան հիմնավորող ու ապագան նախապատրաստող իրողություն է: Մշակույթի միջոցով ազգի հանրությունը և անհատները, անգամ անգիտակցականի մակարդակում, հաղորդակցվում են սեփական նախապատմության, արխետիպերի հետ և դառնում են նաև դրանց կրողները»[6],- գրում է պրոֆեսոր Սուրեն Սարգսյանը: Անվերապահ դիտարկում է:

Անվերապահ է նաև այն հայեցումը, որով կարող ենք շեշտել, որ սեփական նախապատմության և անփոփոխականների՝ նախաէերի հետ հաղորդակցական կապը պահպանող մշակութային արժեքների շարքում անգնահատելի է ճարտարապետական կոթողների դերը: Պետք է նկատել, որ կրոնաեկեղեցական ճարտարապետության գլուխգործոց կոթողները, հետագայում զրկվելով կրոնական գործառույթներից, բնավ չեն կորցրել իրենց նշանակությունը հասարակության կյանքում. դրանք կրոնապաշտամունքային նախասահմանված դերից դուրս ունեն ընդհանուր մշակութային արժեք, և անժխտելի է նրանց ոգեստեղծ դերը ժողովրդի կյանքում:

Գրիգոր Գուրզադյանը կարողացել է ինքնատիպ արվեստով իմաստավորել ու գեղարվեստականացնել այն ամենը, ինչ կապ ու առնչություն ուներ իր երբևէ տեսած, իրեն անսահման հիացմունք պարգևած կոթողների հետ, այն կոթողների, որոնցով կարող է «իրեն սրբագրել»[7] նաև ապագայի արվեստը:

Մեծ մտածողը նրբաճաշակ էր որպես գեղագետ. արվեստի գործը ինքնակերպ էր զգում, լսում ու տեսնում. նա այն դիտում էր իր ներքին աչքով և ներկայացնում ժամանակաշրջանի գեղագիտական դատողությունների համատեքստում: *«Իմ դիտողականությունը սուր է, ես շատ բաների կարող եմ միանգամից հետևել, բայց ընտրողականություն կա, այն միշտ կանգ է առնում լավ բանի վրա, որտեղ զարգացում, շարժում կա»*[8],– կարդում ենք հազվադեպ տրված նրա հարցազրույցներից մեկում:

Ընդհանրապես արվեստագետի դիտողականության վերաբերյալ շատ դիպուկ նկատառում ունի մեծահռչակ Վահրամ Փափազյանը. նա գրում է. «Ստեղծագործողի աչքը սովորական աչք չէ. նա պետք է լինի միևնույն ժամանակ տելեսկոպ և միկրոսկոպ: Նա պետք է կարողանա տեսնել մարդկային հոգու թե՛ տիեզերքը և թե՛ հյուլեն… ….Այնտեղ, որտեղ սովորական աչքի համար սկսվում է խավարն ու մութը, հենց այնտեղից էլ ստեղծագործող աչքի համար սկսվում են խավարի և մթնշաղի անհատնում նյուանսներն ու պոեզիան»[9]:

«Մարդկային հոգու թե՛ տիեզերքը և թե՛ հյուլեն» տեսնող արվեստագետ-գրող Գրիգոր Գուրզադյանի աչքից երբեք չեն վրիպել *«խավարի և մթնշաղի անհատնում նյուանսներն ու պոեզիան»:* Գերերևույթականությունը նրան վերուստ էր տրված:

---

[6] **Ս. Սարգսյան,** Մշակութաբանություն, «Նոյյան Տապան» հրտ., Եր.,1997, էջ 41:

[7] Տե՛ս **Վ. Փափազյան,** Աֆորիզմներ, «Գլաձոր» կառավարման համալսարանի հրտ., Եր., 2003, էջ 71:

[8] http://www.tert.am/am/nevs/2013,08/20/grigor-gurzdyan/843882

[9] **Վ. Փափազյան,** Հետադարձ հայացք, գիրք առաջին, «Սովետ. գրող» հրտ., Եր., 1979, էջ 26:

Ոչ սովորական մտածավալումների տեր գրողն իր մեջ կրում էր *«Տիեզերքը տեսնող, Տիեզերքին լսող», «մարդուն անսահմանորեն գերազանցող Մարդուն»* բնորոշ շատ հատկանիշներ: Թերևս պատճառներից մեկն էլ անձնային այդ յուրօրինակությունն է, որ մեծահռչակ աստղաֆիզիկոսի ստեղծած, տեսակի մեջ եզակի ու անկրկնելի գրականության խորքն ու տարողությունը դժվար է հատկանշել գրականագիտական հասկացությունների սովորական չափումներով ու գնահատումներով: Տեղին է այս առումով հիշել գրականագետ Թեոդոր Գրինի պնդումը, թե՝ «Արվեստի երկի գեղարվեստական որակի եզակի բնույթը կարելի է միայն անմիջապես ներըմբռնել, և թեև դա կարող է ցուցադրվել և նշվել, բայց չի կարող ո՛չ բնորոշվել, ո՛չ էլ անգամ նկարագրվել»[10]:

Աշխարհն ինքնօրինակ ընկալող Գուրզադյանը այն, ինչ տեսնում էր, գրչով՝ թղթին, վրձնով կտավին էր հանձնում: Իսկ այն, ինչ նա էր տեսնում, հոյակապ էր իր արարչական ներդաշնակությամբ: Այդ աշխարհում, սակայն, շատ էին նաև տիեզերական մտածողին ցավ պատճառող երևույթները: Նա տեսնում էր, թե ինչպես է մարդը անհեռատեսորեն խաթարում արարչական ներդաշնակությունը և գնում դեպի կործանում *(«Մարդն ի սկզբանե դուրս է եկել տիեզերական հարմոնիայից, այդ պատճառով էլ դատապարտված է կործանման»[11]):*

Որպես իր երկրի նվիրյալ քաղաքացի՝ Գուրզադյանը մտահոգություններ, վախեր, տագնապներ ուներ. անհանգստանում էր, թե սերունդը կարող է արժեքային ընկալումների խեղումներ ունենալ ու ազգային կողմնորոշիչներից հեռանալ: Խորն էր նրա մտահոգությունը նաև ճարտարապետական կոթողների ճակատագրի համար: Վերջիններիս նկատմամբ նրա վերաբերմունքը, ինչ խոսք, առանձնակի էր, քանի որ տաճարների ճակատագրերը շատ ավելի առարկայորեն են տեսանելի դարձնում պատմական ճշմարտության սահմռկեցուցիչ էությունը: Բնականաբար առանձնակի են մարդկային մտքի հրաշագործած այդ կառույց-արարչությունների տեղն ու դերը նաև Գուրզադյանի ստեղծած գեղագիտական աշխարհում, քանի որ դրանք, լինեն կանգուն, կիսավեր թե ավեր, հավասարապես մեծարժեք են նախևառաջ իրենց՝ ազգային պատմամշակութային հիշողության պահպանման նշանակությամբ:

Ամերիկացի սոցիոլոգ Պիտիրիմ Սորոկինը առանձնացնում է մշակույթի երեք հիմնական տիպ՝ զգացական (գերակշռում է իրականության զգացական ընկալումը), իդեացիոնալ (գերակշռում է բանական մտածողությունը), իդեալիստական (իշխում է իմացության ինտուիտիվ մեթոդը): Այս երեք տիպերի դրսևորումներին էլ տեր լինելով, ինչպես և քաջատեղյակ լինելով հասարակության պատկերացրած գեղագիտական աշխարհի նրբագծերին՝ Գրիգոր Գուրզադյանն իր հսկայածավալ իմացության գեղարվեստական արտահայտումները կատարել է ոչ միայն խնդրո առարկա դարձրած նյութի բազմակողմանի մեկնաբանություններով, այլև պատկերավորման հարստությամբ հատկանշվող գեղագիտական ընդհանրացումներով:

Գուրզադյանի խոհագրություններին առինքնող անմիջականություն հաղորդող ամենաընդգծուն գործոնը նուրբ պատկերավորությունն է: Դիտարկումը հավաստենք օրինակներով: Հապա. **Վենետիկի Սուրբ Մարկո տաճարի կամարաշարը**. *«Այդ կամարաշարը մի հրաշք է, մի հսկա սիմֆոնիա,*

---

[10] **Greene T.M.,** The Arts and the Art of Criticism, Princeton, 1940, էջ 389:

[11] https://www. Facebook.com/hashtag/մտքեր

շքերթ կամարների, տիեզերական տեսիլ…»[*] *[22]:* Քիչ հետո՝ *«իր թեթևամիտ պերճությամբ ու ճչացող կոկետությամբ»* **Դոժերի պալատը** *«ոչ այլ ինչ է, քան ճարտարապետության հանճարեղ թյուրիմացություն, եթե ոչ հանճարեղ անհեթեթություն» [23]:* Ահա և **Կոլիզեումը.** այն *«հռոմեական ճարտարապետության հանճարի ճիչն է, ահռելի ուժի մի պոռթկում, անդրաշխարհային մի տեսիլ, որը կարծես թափառելով հավերժության մեջ տիեզերական անսահմանությունով մեկ՝ չգիտես ինչու, վայրէջքի տեղ է ընտրել այս հողագունդը» [72]:* Չրջանցենք **Հաթշեփսուտի տաճարը** Դեյր-էլ-Բահարիիում. *«Մարդու շունչ է կտրվում. դա մի հուժկու սիմֆոնիա է, հազարավոր փողային գործիքներից պոռթկացող մի դղրդալից սիմֆոնիա, Ստակովսկին կամ Ֆոն Կարայանը այդ տեսարանի առաջ գլխի խելացնոր թափահարումով վեր կնետեին զույգ ձեռքերը այդ ցնորամիտ սիմֆոնիայի հնչյունները տիեզերքի հեռավոր անկյունները հասցնելու համար…» [218]:*

Խոհագրություններում անընդհատ հանդիպում ենք գուրզադյանական ոճի ու գեղագիտական մտածողության առավել հետաքրքրական որակների: Ասելիքն ամբողջացնող պատկերների հենաբառերի համածավալ ընթացքը նրա գործերում հիմնականում գեղարվեստական վայելչախոսության և գեղաբանության գործառույթներ են իրականացնում, հիացնում ճշմարիտ գեղագետին վայել ներկայանակով ստեղծված ինքնատիպ աշխարհով:

Գրողը գեղագիտական հարուստ հնարանքներով է կերպավորում հատկապես հայ մարդու մտքի թռիչքները ճարտարապետության բնագավառում:

Խորագիտակ մարդու անսահման հիացման, մեծ սիրո ու հոգու խռովքի գեղարվեստական մարմնավորման փայլուն արտահայտություններ են **Խծկոնքին, Կաքավաբերդին, Կուսանաց վանքին, Կարմրավորին, Պտղնու կամարին** նվիրված գործերը՝ հագեցած խոհափիլիսոփայական յուրատիպ վերլուծումներով, հեղինակային նրբահույզ ապրումների խտացված պատկերներով:

Հավաստենք՝ մեջբերելով մի քանի պատկերներ: **«Երկնքից իջած» հրաշք Խծկոնքը**. *«….Ֆանտաստիկ անդունդի գլխին վերասլաց մի վանք, գուցե և վանքերի մի ամբողջ խուրձ, որն իր տեսքով, երկինք հառված իր ուրվականով հարկադրում է մոտեցողին «դեռ հեռվից քարանալ տեղում», ու նրան թվում է, թե «հայտնվել է մի անդրաշխարհային տեսիլքի առաջ»*[12]*:* **Կաքավաբերդը.** *«….Երևում է ինչպես տեսիլք, միրաժ, ինչպես մի կանթեղ՝ երկնքից կախված: Ակամա մեխվում ես տեղում, շունչդ է կտրվում այդ անակնկալից, քո դիմաց ակնթարթն է գեղեցկության»*[13]*:* **Պտղնու կամարը.** *«Կարելի՞ բան է, որ մի ավերակ, ընդամենը մի մերկ կամար, այդպես բարձր, այդպես վեհ, դրոշմված երկնքի կապուտակին, հնչի ինչպես մի հիմն, դղրդալից մի ռապսոդիա… Ու լինի այդքան վեհ, այդքան հանդիսավոր…»*[14]*:* **Կուսանաց վանքը.** *«….Ախուրյանի ափին՝ գահավեժ ժայռի կատարին՝ այս հիասքանչ լեռնապարի առաջ, կատարյալ սիմֆոնիա է, լիրիկական սիմֆոնիա…»*[15]*:* Ահա և Աշտարակի **Կարմրավորը.** *«…Մի գողտրիկ հրաշք, այնքան քնքուշ, այնքան մտերմիկ, որ մարդ ակամա ձեռքերն է մեկնում ափը վերց-*

---

[*] Այս և հաջորդիվ տրվող էջանշումով օրինակները մեջբերված են Գր. Գուրզադյանի «Կաքավաբերդի առեղծվածը» ժողովածուից:

[12] **Գր. Գուրզադյան,** Տիեզերքը ափի մեջ, «Զանգակ-97» հրտ., Եր., 2005, էջ 323:

[13] **Գր. Գուրզադյան,** Կաքավաբերդի առեղծվածը, էջ 90:

[14] **Գր. Գուրզադյան,** Կոսմիկական կատաստրոֆա, «Զանգակ-97» հրտ., Եր., 2004, էջ 203:

[15] **Գր. Գուրզադյան,** Մի սիրո պատմություն, «Զանգակ-97» հրտ., Եր., 2004, էջ 42:

նելու, գուրգուրելու այդ քարե փունջը: Ինձ այնպես է թվում, որ այդ ապշեցուցիչ համաչափությունն ու անթերի ներդաշնակությունն ստեղծողի ականջին գլխահակ, մուրճն ու բրիչը ձեռքին աշխատելիս հնչել է մի տարաշխարհիկ սիմֆոնիա՝ երգեհոնային նվագակցությամբ»[16]*:*

Եվ ամեն անգամ նման պատկերների հանդիպելիս չես կարողանում խուսափել կրկնելուց՝ Գուրզադյանը *«սքանչելիորեն հմուտ է ոճի մեջ»*[17]*:*

Հայոց քարակերտ կոթողների համապատկերում հայրենիքի ոչ թե մտացածին, տեսլական, այլ իրական բովանդակությունը գուրզադյանական գրականության լեզվատարածքում գոյավորում է անասելի գեղեցկությամբ պատկերների մի հարուստ աշխարհ: Ահավասիկ մի փոքրիկ կտոր այդ աշխարհից. *«…Գալիս է գարունը… տաքանում են ժայռերը, ձյունը հետ է քաշվում, հողն է սկսում ուռչել փխրուն բլղուրի նման, երևում են առաջին ծիլերը… կանաչն է բռնում սար ու ձոր, ծաղիկներ անհամար՝ տարածված լանջերով մեկ, գույների խրախճանք է, ալպիական փարթամություն: ….Իսկ վերևում՝ բարձր, լաջվարդ կապուտակի վրա, արծիվն է սահում թևատարած… Կաքավաբերդ, դու երանություն ես, երազ…»*[18]*:*

Առանձնանշելի է, որ թե՛ համաշխարհային, թե՛ հայ ճարտարապետական արվեստի հանրահայտ կոթողների նկարագրությունների համապատկերում հանդիպում են տարաբնույթ զգացողություններ առաջացնող այնպիսի դրվագներ, որոնք առեղծվածայինի հետ հանդիպելու անսովոր հոգեբանական կացություն են ստեղծում: Հեղինակի՝ ինքնօրինակ դիտողականությամբ և փիլիսոփայական խորիմաստ մեկնաբանություններով մոտեցումները մշակութային արժեքներին խորապես ազդում են ընթերցողի պատմաներգործական գիտակցության վրա և իմացական աշխարհ տանող նոր ծիրեր բացում:

Ընդգծումով նշենք. ազգային մշակույթով հիացումի ներկայությունը Գրիգոր Գուրզադյանի ստեղծագործությունների գեղագիտական ազդեցությունն ու տպավորությունն ապահովող կարևոր գործոններից է:

Հուզական խորաշերտերի առատությամբ առանձնանում է հատկապես **«Կաքավաբերդի առեղծվածը»** ժողովածուն: Նրանում ամփոփված խոհագրությունները իրենց արտացոլած կենսական նյութով և գաղափարական մեկնաբանություններով ստեղծում են դրամատիզմով, իմաստասիրական խոհերով, խորաշերտ վերլուծություններով ու զարմանալի հայտնություններով հագեցած մի ինքնատիպ գեղարվեստական աշխարհ, որ իր տեսակի մեջ անկրկնելի է նաև մեր լեզվամտածելակերպի մեջ խտացված գեղագիտական հնարանքների վարպետ գործածությամբ:

Հանճարեղ աստղաֆիզիկոսը մեծ հմտությամբ է օգտվել, ինչպես նման դեպքերում Վահրամ Փափազյանը կասեր՝ «յուրաքանչյուր բառի տակ թաքնված միտքը, հոգին խոսք դարձնելու» շնորհյալ հնարավորությունից:

Իր առինքնող խոսքի գեղագիտական զորությամբ ներկայացնելով գեղարվեստական կերպավորում ստացած հայկական ճարտարապետության բազմաթիվ գլուխգործոցներ՝ Գրիգոր Գուրզադյանը փաստացի հյուսում է հայրենիքի փառավորման յուրօրինակ ասք, որի պաթոսը իր անմնացորդ նվիրումն է ամենայն ազգայինին. նվիրում, որի գեղարվեստականացումով նա հազար թելով ընթերցողին կապում է հայրենի հողին ու մշակույթին:

---

[16] **Գր. Գուրզադյան,** Էսսեներ, հարցազրույցներ, էջ 50:

[17] **Լ. Անանյան, Լ. Մկրտչյան,** Գրիգոր Գուրզադյանի աշխարհը, Գր. Գուրզադյան, Կոսմիկական կատաստրոֆա, էջ 354:

[18] **Գր. Գուրզադյան**, Կաքավաբերդի առեղծվածը, էջ 97-98:

Գուրզադյանը ամենայն խորությամբ էր զգում ցավը այն հոգևոր աղետի, որի առաջ կարող է կանգնել ժողովուրդը ազգային արժեքներից նահանջելու դեպքում: Ինչպես ազգի պատմական հիշողության և հոգևոր կողմնորոշիչների, այնպես էլ դավանած բարոյական արժեքների ու սոցիալական պատկերացումների համակարգի նրա ըմբռնումները ոչ միայն կենսական մեծ տարողություն, այլև կեցության շատ լայն ընդգրկում ունեն: Որոշ խոհագրություններում հայկական կոթողներին վերաբերող թեմաների մասնավորումը բխում է դրանց ելակետային դրույթների ուղղվածությունից և գրողի գեղագիտական դավանանքից: Գուրզադյանը քաջ գիտակցում էր մշակութային արժեքների բարոյագեղագիտական անգնահատելի նշանակությունը մարդու կերպի, նրա բնավորության ձևավորման, աշխարհայացքի ընդլայնման, կենսազգացողության և հոգևոր մտազննումների խորացման գործում: Այս գիտակցման գեղարվեստական մարմնավորումը ավելի ընդգծուն է դարձնում գրողի ստեղծագործությունների գեղագիտական նշանակությունը: Խոհագրություններում գոյավորված գեղագիտական աշխարհը հատկանշական է ինչպես իր ճանաչողական նշանակությամբ, այնպես էլ պատմամշակութային հիշողության պահպանման առաքելությամբ: Աշխարհահռչակ աստղաֆիզիկոսը իր ստեղծած գեղագիտական միջավայրում կուռ համադրության մեջ է դրել ինչպես համամարդկային, այնպես էլ ազգային բարձր ու վավերական արժեքները ներառող թե՛ մշակութային, թե՛ բարոյահոգեբանական կենսորոշիչներ:

Հայրենի մշակութային հարստության նշանավորման գուրզադյանական գաղափարախոսությունը իր փիլիսոփայական ելակետով և հասարակական նպատակներով ծառայում է մեր ազգային արժեհամակարգում կարևոր դեր ունեցող որոշ կողմնորոշիչների հետնահանջի դեմն առնելուն, չարժեքների ներթափանցումներից պաշտպանելուն և հնարավորինս ազգայինի մաքրամաքուր ակունքների պահպանմանն ու զորացմանը:

Օգտագործված գրականություն

1. Գր. Գուրզադյան, Էսսեներ, հարցազրույցներ, «Զանգակ» հրտ., Եր., 2012:
2. Գր. Գուրզադյան, Կաքավաբերդի առեղծվածը, «Ապոլոն» հրտ., Եր., 1998:
3. Բ. Գիշյան, Մահվան արևելյան և արևմտյան արժեքային կողմնորոշումների շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, 2004:
4. Ս. Սարգսյան, Մշակութաբանություն, «Նոյյան Տապան» հրտ., Եր., 1997:
5. Վ. Փափազյան, Աֆորիզմներ, «Գլաձոր» կառավարման համալսարանի հրտ., Եր., 2003:
6. Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, գիրք առաջին, «Սովետ. գրող» հրտ., Եր., 1979:
7. Գր. Գուրզադյան, Տիեզերքը ափի մեջ, «Զանգակ-97» հրտ., Եր., 2005:
8. Գր. Գուրզադյան, Կոսմիկական կատաստրոֆա, «Զանգակ-97» հրտ., Եր., 2004:
9. Գր. Գուրզադյան, Մի սիրո պատմություն, «Զանգակ-97» հրտ., Եր., 2004:
10. Լ. Անանյան, Լ. Մկրտչյան, Գրիգոր Գուրզադյանի աշխարհը, Գր. Գուրզադյան, Կոսմիկական կատաստրոֆա:
11. Greene T. M., The Arts and the Art of Criticism, Princeton, 1940:
12. http://www.tert.am/am/nevs/2013,08/20/grigor-gurzdyan/843882
13. https://www. Facebook.com/hashtag/մտքեր

ЗУХРА ЕРВАНДЯН
Доцент кафедры языков АГЭУ,
кандидат филологических наук

Григор Гурзадян: архитектурные памятники как фактор сохранения историко-культурной памяти.– Национально-культурное значение созданного Григором Гурзадяном эстетического мира неоценимо. Писатель в ряде великих исторических событий отводит существенную роль именно архитектуре. В его эстетической системе отдельному вниманию удостоена армянская древняя архитектура, которую он считает могучим явлением, “исключительным и строго своеобразным явлением для мира”.

Гурзадян с безграничным восторгом изображает и оценивает великолепный полет мысли армянского человека в сфере архитектуры: эти шедевры, будучи в сохраненной форме, полуразрушенными или разрушенными, в равной мере считает ценными, в первую очередь, учитывая их значение в сохранении национальной, историко-культурной памяти.

Ключевые слова: *историко-культурный, присущий внутреннему миру, всемирно известный, эксперт, эстет, эссеистический, национально-культурный, своеобразный, шедевры, ценный.*
JEL: Z11

ZOUKHRA YERVANDYAN
Associate Professor at the Chair of Languages at ASUE,
PhD in Philology

Grigor Gurzadyan: Architectural Monuments as a Preservation Factor of Historical-cultural Memory.– The significance of cultural identity of aesthetic world created by Grigor Gurzadyan is invaluable. In the row of great historical events, the writer attaches much importance to architecture. In his aesthetic system, peculiar attention is paid to ancient Armenian architecture, which he considers to be a powerful phenomenon, “exceptional and strictly unique phenimenon for the world”.

Gurzadyan depicts and evaluates magnificent ideas of an Armenian man in the sphere of architecture with overwhelming emotions. These masterpieces, regardless of the fact they are preserved, dilapidated or destroyed, are considered valuable by Gurzadyan, first of all, for their value of preserving national, historical and cultural memory.

Key words: *historical-cultural, inherent to inner world, world-famous, expert, aesthete, essayistic, cultural identity, peculiar, masterpiece, valuable.*
JEL: Z11